Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՀԽ-3 (10)

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2019 թ. դեկտեմբերի 6

Նիստը վարում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Արաքսիա Սվաջյան	«Արև» երեխայի զարգացման հիմնադրամ
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ ՀԿ
Տաթևիկ Կարապետյան	«Երեխաների պաշտպանության ցանց ոչ առևտրային» ԻԱՄ
Մարինե Համբարձումյան	«Հայ օգնության միություն» ԲՀԿ
Գոհար Խաչատրյան	«Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ
Անահիտ Գևորգյան	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
Անահիտ Նահապետյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ
Քրիստինե Մխիթարյան	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
Սպարտակ Սարգսյան	«ՍՕՍ մանկական գյուղեր» ԲՀԿ
Գայանե Մարտիրոսյան	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲՀԿ
Արտյոմ Պետրոսյան	«Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ
Գրիգորի Գրիգորյանց	«Սեյվ դը Չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչություն

Քրիստինե Հովհաննիսյան	«Օքսեջեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն)

Հրավիրված և մասնակցում էին՝

Գեմաֆին Գասպարյան	Նախարարի առաջին տեղակալ
Արայիկ Պետրոսյան	Նախարարի խորհրդական
Աստղիկ Մինասյան	Նախարարության սոցիալական աջակցության վարչության պետ
Գեղանուշ Գյունաշյան	Նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
Արտակ Մարկոսյան	Նախարարության ժողովրդագրության բաժնի պետ
Արմեն Մարգարյան	Նախարարության սոցիալական աջակցության վարչության նպաստների բաժնի պետ-վարչության պետի տեղակալ
Արման Սարգսյան	Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Աննա Նադարյան	Նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի առաջատար մասնագետ
Գայանե Մանուկյան	Նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Խորհրդի անդամներ

Սուսաննա Թադևոսյան	«Հույսի կամուրջ» ՀԿ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
Արտաշես Տոռոզյան	«Գործընկերություն և ուսուցում» ԳՈՒՄ/ՀԿ
Աննա Մնացականյան	Ֆիզիկական անձ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում և քննարկում:

(Զեկուցող՝ ԱՍՀՆ սոցիալական աջակցության վարչության պետ Աստղիկ Մինասյան)

2. «ՀՀ անապահովության գնահատման և սոցիալական աջակցության նոր մոտեցում» նախագծի ներկայացում և քննարկում:

(Զեկուցող՝ ԱՍՀՆ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն Արման Սարգսյան)

3. Այլ հարցեր

Նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանն ողջունել է Խորհրդի մասնակիցներին և անդրադարձել է նիստի օրակարգին, որի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ չեն ներկայացվել և այն հաստատվել է միաձայն, որից հետո նա մասնակիցներին իրազեկել է 2019 թվականի դեկտեմբերի 5-ի «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ

օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի փաթեթը ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանալու մասին՝ նշելով, որ օրենսդրական փոփոխությունները հնարավորություն են տալու Նախարարության իրավասության ներքո ունենալ սոցիալական կարիքի գնահատման միասնական գործառույթ: Վերջինս երկար ժամանակ եղել է տարբեր մարմինների աշխատանքային նկարագրում և պարտականություններում, որն իր ազդեցությունն է ունեցել տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և հասցեականության ապահովման վրա: Այն մեծ ինստիտուցիոնալ փոփոխության սկիզբ է, որին հաջորդելու է նաև միասնական սոցիալական գրասենյակի ստեղծումը, որը սոցիալական կարիքի գնահատման համար կդառնա հիմնական օղակ և կիրականացնի իրապես ինտենսիվ և որակյալ գործընթաց: Միաժամանակ ավելացրել է, որ սոցիալական աշխատողի ինստիտուտի զարգացման նախադրյալների ապահովման ուղղությամբ այս ընթացքում իրականացվել է նախապատրաստական մեծածավալ աշխատանք, ինչպես նաև իրազեկել է, որ դեպքի վարման տեղեկատվական համակարգի լրամշակման աշխատանքները ներկայումս գտնվում են ավարտական փուլում: Կարևորել է կազմակերպությունների շրջանում հեռահաղորդակցման ծառայությունների տրամադրման մրցույթը, որը հնարավորություն է տալու սոցիալական աշխատողին տրամադրել համապատասխան կապի ծառայություններով հագեցված շարժական տեխնիկական միջոցներ: Այնուհետև նշել է, որ 2020թ. բյուջեում ներառված է նաև տունայցերի ֆինանսավորման հարցը, ինչը նշանակում է, որ սոցիալական աշխատողները կկարողանան իրականացնել տնային այցելությունները և համապատասխան ծրագրերի ապահովում տեխնիկական միջոցը կլինի արդյունավետ գործիք թե աշխատանքի որակի, թե նրա թափանցիկությունը և վերահսկողությունը բարձրացնելու տեսանկյունից:

Օրակարգի առաջին հարցի շրջանակում՝ Նախարարության սոցիալական աջակցության վարչության պետ Աստղիկ Մինասյանը անդրադարձել է աղքատության իրավիճակին, պատկերին և աղքատության որոշման չափորոշիչներին, համընդհանուր սոցիալական ծառայություններին, այնուհետև մանրամասն ներկայացրել է «Պետական

նպաստների մասին» և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքներում իրականացված փոփոխությունները:

Նշել է, որ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

- ընտանիքի սոցիալական կարիքների գնահատման միասնական համակարգի ձևավորում,
- ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի տեղեկատվական ենթահամակարգի ստեղծում (օպերատիվություն, հավաստիություն, հասցեականություն),
- տնային այցելությունների ֆինանսավորում,
- տնային այցելության ընթացքում տվյալների ամրագրման հնարավորություն (դյուրակիր համակարգչային տեխնիկայի առկայություն),
- սոցիալական ծառայությունների տրամադրման պատվիրակում՝ ոչ պետական կառույցներին մրցակցային հիմունքով,
- ՏԻՄ-երի հզորացում՝ համայնքային սոցիալական աշխատող և տեղական սոցիալական ծրագրերի իրականացում,
- այլ սոցիալական ծառայությունների սահմանում ՀՀ կառավարության կողմից (ՍԾ շուկայի բազմազանություն),
- բնակչության սոցիալական պաշտպանության փոքր տներ,
- հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց մասնագիտացված խնամքի և սոցիալական այլ ծառայություններ (տնային պայմաններում), անվճար ճաշարան, շրջիկ խոհանոց և այլն,
- սոցիալական ծառայության տրամադրում սերտիֆիկատների միջոցով,

Որպես փոփոխություն նշվել են նաև սոցիալական բնակարանաշինության նոր մոտեցումներն ու տարբերակումները, մասնավորապես, հիփոթեքային վարկի ամբողջական կամ մասնակի հատուցման, բնակարանի վկայագրի տրամադրման կամ վարձակալության, պայմանագրային հիմունքներով սոցիալական տան տրամադրման ձևերը:

Այսպիսով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի արդյունքում ակնկալվում է ընտանիքներին տրամադրվող աջակցության բարձր հասցեականություն, ինչպես նաև սոցիալապես անապահով և խոցելի խմբերի համար համարժեք և բազմազան սոցիալական ծառայությունների տրամադրման հնարավորություն, համակարգի գործառնության ծախսարդյունավետության բարձրացում:

Հավելել է, որ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում դրամական վճարների որպես առանձին տեսակ ընտանիքի կայուն եկամուտի ձևավորման դրամագլուխն է նախատեսվում, որը, որպես դրամական վճար, իր կարգավորումները պետք է ստանա «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում:

Նշել է նաև, որ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները վերաբերվում է նաև ընտանիքի կայուն եկամուտի ձևավորման դրամագլխի տրամադրման համար դրամական միջոցների ծավալին, այն ստանալու իրավունք ունեցող անձին: Միաժամանակ ընդգծել է, որ համապատասխան փոփոխության արդյունքում վերացվելու են նաև կրկնվող նպաստների տեսակները:

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում ակնկալվում է նպաստառու ընտանիքներին տրամադրվող աջակցության բարձր հասցեականություն, անապահով ընտանիքների զարգացած կարողություններ, ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակ ունեցող ընտանիքների առկայություն, աղքատության փուլային հաղթահարում, ինչպես նաև պետական աջակցությունից ընտանիքների երկարատև կախվածության և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:

Ներկայացված օրենքների նախագծերի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից հնչել են տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի ներկայացուցիչ Ա. Հարությունյանն առաջարկել է նախագծում հստակեցնել, մասնավորեցնել «անուրեք» և «անօթևան» հասկացության տարբերությունը: Առաջարկին ի պատասխան տիկին Մինասյանը նշել է,

որ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ «անուրեք» և «անօթևան» հասկացության տարբերության հստակեցման նպատակով կսահմանվեն համապատասխան չափորոշիչներ:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի ներկայացուցիչ Ա. Հարությունյանն նաև առաջարկել է նախագծում «սոցիալական տան» սահմանման փոխարեն կիրառել «բազմաբնակարան շենք՝ առանց սեփականության իրավունքի, համակեցության կանոններով և տրված անժամկետ կամ ժամկետով» սահմանումը՝ միաժամանակ առաջարկելով որդեգրել իր կողմից առաջարկված մոդելը:

Նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանը վերը նշված խնդրին լուծում տալու նպատակով առաջարկել է կազմակերպել քննարկումներ:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության անապահովության գնահատման համակարգի և սոցիալական աջակցության նոր մոտեցումների մասին խոսել է Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն Արման Սարգսյանը: Նա անդրադարձել է նպաստների համակարգի գնահատման նոր մեթոդաբանությանը՝ նյութական անապահովության խնդրի լուծման բարեփոխմանը, ինչպես նաև գործող և առաջարկվող համակարգերի տարբերությանը: Մանրամասն նկարագրել է անապահովության գնահատման մակրոպատկերն ու կառուցակարգերը, կյանքի որակի հիմնական գործոնները՝ առանձնացնելով չորս տեսակ՝

- համընդհանուր հիմնական եկամտի ապահովում,
- երաշխավորված նվազագույն եկամուտ,
- փորձագիտական գործոնների հենք,
- էկոնոմետրիկ մոդելով գնահատում:

Բանախոսը ներկայացրել է նաև աղքատության վերացման լուծման տարբերակները՝ ընտանիքի եկամուտների ճիշտ հաշվարկներ, եկամտի վրա հիմնված անապահովության սոցիալական վճարի գնահատման նոր մեթոդ, նպաստի նոր չափերի բաշխման ձևեր:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանը նշել է, որ փաստացի առաջարկվող համակարգը բովանդակային առումով է

փոփոխություն առաջարկում՝ սպառումից անցում կատարելով եկամուտին: Միաժամանակ նշել է, որ դրամային աջակցությունն համակարգի բարեփոխման կոնտեքստում նախատեսվում է տրամադրել միայն ծայրահեղ աղքատության և պարենային ապահովման խնդիր ունեցող ընտանիքներին և դրամային աջակցության այս ձևը լինելու է շատ սահմանափակ ՝ նախատեսված կոնկրետ խմբի համար: Հավելել է, որ անհրաժեշտ է ստեղծել մեթոդաբանորեն պարզ, տրամաբանական, նպատակային, որակյալ ու հասցեական նպաստների համակարգ:

Ժաննա Անդրեասյանն, ինչպես նաև Արման Սարգսյանը նշել են, որ այս ձևաչափով ներկայացված աշխատանքների արդյունքներն արտաքին լսարանին առաջին անգամ է ներկայացվում:

Օրակարգի 2-րդ հարցին անդրադառնալով՝ նախարարի խորհրդական Արայիկ Պետրոսյանը հավելել է, որ օբյեկտիվ գնահատման միջոցով եկամուտների ճիշտ հաշվառման գաղափարը միշտ շրջանառվել է, սակայն խնդիրը հիմնականում իրական եկամուտներ հաշվառելու հանգամանքն է եղել: Հիմնական գաղափարախոսությունն այն է, որ սպառումից փորձ ենք անելու անցում կատարել եկամուտի հաշվառմանը՝ այսինքն՝ անուղղակի մեթոդից՝ ուղղակի մեթոդներով գնահատմանը: Միաժամանակ ընդգծել, որ վերոնշյալ համակարգի հիմնասյունն աշխատունակ մարդկանց աշխատաշուկա ներգրավելու խնդիրն է:

Օրակարգի երկրորդ հարցի ներկայացումից հետո ևս Խորհրդի անդամների կողմից հնչել են տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

Ամփոփելով նիստի աշխատանքները՝ նախարարի տեղակալը շնորհակալություն է հայտնել մասնակիցներին քննարկման համար: Նշել է, որ նիստում քննարկված օրենսդրական նախաձեռնություններն ու նախագծերը իրականացվել են գաղափարական հենքի վրա: Օրակարգի 2-րդ հարցի գլոբալ, բովանդակային փոփոխության հանգամանք ընդգծելով՝ առաջարկել է առաջիկայում ամենատարբեր ձևաչափերով խորհրդի անդամների կողմից ներկայացված հիմնավոր առաջարկությունների, նկատառումների շրջանակում կազմակերպել լրացուցիչ քննարկումներ:

Նիստի ավարտին որոշում է կայացվել կազմել արձանագրություն և Խորհրդի անդամների հետ համաձայնեցնելով այն ներկայացնել ստորագրման:

12/16/2019

X

ԱՐԱՄԻ ԺԱՆՆԱ

ՆԻՍՏԸ ՎԱՐԵՑ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝ **Զ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆԸ**